ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 07

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի և հիմք ընդունելով Զրառատ համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 16-ի N 11-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1.Զրառատ համայնքի ղեկավարի 2019թվականի կատարված աշխատանքների վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:

2.Հաստատել Զրառատ համայնքի ղեկավարի 2019թվականի կատարված աշխատանքների վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 թ.
գ.Զրառատ

Հավելված

ՀՀ Կոտայքի մարզի Զրառատ
համայնքի ղեկավարի 2020թվականի
հունվարի 29-ի թիվ 07 որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սույնով Զրառատի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2020թվականի հունվարի 29-ից մինչև փետրվարի 11-ը ներառյալ իրականացվող Զրառատ համայնքի ղեկավարի 2019թվականի կատարած աշխատանքների վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին:

Շահագրգիռ անձինք կարող են մինչև 2020վականի փետրվարի 11-ը ներառյալ համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված նախագծերի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ուղարկել jrarat.kotayq@mta.gov.am էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև գրավոր ներկայացնել Զրառատի համայնքապետարան.

Հանրային քննարկումների ընթացքում 2020թ. փետրվարի 12-ին ժամը 14.00-ին գ.Զրառատ, 1-ին փողոց, 2 շենք հասցեում գտնվող Զրառատի համայնքապետարանի վարչական շենքի 2-րդ հարկում տեղի կունենա հանրային բաց լսումներ:

Լսումներին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև 2020թ. փետրվարի 11-ը ներառյալ ներկայացնել դիմում:

Լրացուցին տեղեկություններ ստանալու համար զանգահարել 094382633 հոռախոսահամարով

Զրառատի համայնքապետարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 08

ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 28-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ջրառատ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 16-ի N 28-Ն որոշումն՝ *որոշում է.*

1. Ջրառատ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 16-ի «Ջրառատ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 28-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումները

Բյուջեի ծախսային մաս

1. 1. 1. 51 ծրագրի 4111 հոդվածի «11300» թիվը փոխարինել «11000» թվով

1.1.1.51 ծրագրի 4212 հոդվածի «219.7» թիվը փոխարինել «369.7» թվով

6. 4. 1. 51 ծրագրի 4269 հոդվածի «0» թիվը փոխարինել «150»թվով

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. _____
գ.Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի դրույթներով՝ *որոշում եմ.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված Ջրառատ համայնքում 2020թվականին իրականացվելիք միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. _____
գ.Ջրառատ

Հավելված
Ջրառատ համայնքի ղեկավարի
2020թվականի փետրվարի 03-ի
թիվ 09 որոշման

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՔԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ/Հ	ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ	ԺԱՄԿԵՏԸ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
1	Ցեղասպանության զոհերի հիշատակի օր	24 ապրիլի	կազմակերպել այցելություն Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում գտնվող եղեռնի զոհերի հիշատակին կառուցված հուշարձան
2	Հաղթանակի և խաղության եռատոն	09 մայիսի	կազմակերպել այցելություն Հրազդան քաղաքի հայրենիքի պաշտպանի հուշարձան
2	Երեխաների իրավունքների պաշտպանության օր	01 հունիսի	համայնքապետարանի բակում կազմակերպել միջոցառում համայնքի փոքրիկ բնակիչների համար
4	Անկախության օր	21 սեպտեբերի	կազմակերպել տոնական միջոցառում Անկախության օրվան նվիրված
5	Ամանոր և Ծննդյան տոներ	31 դեկտեմբերի	կազմակերպել տոնական միջոցառում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 10

ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝ որոշում եմ.

1. Հաստատել Ջրառատի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2020թվականի ամենամյա արձակուրդների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Ի գիտություն ընդունել, որ աշխատակազմի բնականոն ընթացքն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով հնարավոր է կատարել արձակուրդների տեղաշարժ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20___թ. _____ ___
գ.Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 11

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թվականի հունիսի 2-ի <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաճելու մասին>> թիվ 631-Ն որոշման պահանջով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Ջրառատ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020թվականի աշխատանքային տարվա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Անթառամ Պետրոսյանին խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի տարեկան ծրագրի միջոցառումները կատարել 2020 թվականի տարեկան ծրագրին համապատասխան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. _____
գ.Ջրառատ

Հաստատված
Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի
ղեկավարի 2020թվականի փետրվարի 06-ի № 11

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020ԹՎԱԿԱՆԻ

1.Ներածություն

Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020թվականի տարեկան ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) մշակվել է՝ ՀՀ ընտանեական օրենսգիքի, ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշման, խնամակալության և հոգաբարձության /ԽՀ/ մարմինների կանոնադրության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 13.09.2011թ. <<Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցը>> հաստատելու մասին>> թիվ 69-Ա/1 հրամանի պահանջներին համապատասխան:

Ծրագիրը համահունչ է երեխաների պաշտպանության համակարգի բարեփոխումների պետական քաղաքականությանը և երեխայի իրավունքների պաշտպանության պետական ծրագրին:

2.Տարեկան ծրագրի նպատակը և խնդիրները

2.1 Ծրագրի նպատակն է՝

Կոտայքի մարզի Ջրառատ համայնքում բարելավել երեխաների բնականոն զարգացումը, նպաստել ազգային և համամարդկային արժեքներ կրող անձի ներդաշնակ ձևավորմանը:

2.2 Ծրագրի հիմնական խնդիրներն են՝

ապահովել՝

- երեխաների, ինչպես անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանությունը
- ընտանիքում ապրելու ու դաստիրակվելու երեխայի իրավունքը
- կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, այդ թվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը ինչպես նաև օրենքով նախատեսված այլ խնդիրներ:

2.3.Ծրագրի նպատակին հասանելիության ուղղված գործառույթները՝

Բացահայտել՝

1. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և այն չափահաս անձանց մասին տեղեկությունները, ովքեր ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ
2. Ծնողների, ծնողական խնամքի բացակայության, ծնողական խնամքից զրկվելու այլ դեպքեր
3. Համայնքում երեխայի ծննդյան փաստի՝ օրենքով սահմանված կարգով չգրանցման, ինչպես նաև երեխաների մահացության, համայնքում երեխաների թրաֆիքինգի դեպքերը
4. Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին:

Իրականացնել՝

Հանձնաժողովին լիազորությունների շրջանակներում ՀՀ օրենսդրությամբ վերապահված գործառույթները, մասնավորապես՝

1. Սկզբնական հաշվառման վերցնել առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին
2. Անցկացնել երեխայի և այն անձի /անձանց/ կյանքի հետազոտություն, ովքեր հավակնում են նրա հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը
3. Այլ գործառույթներ:

3.Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում 2020թվականին նախատեսվող միջոցառումները

3.1 Իրավիճակի վերլուծություն

Կոտայքի մարզի Ջրառատ համայնքում երեխաների իրավունքների պաշտպանության որակի բարելավման, իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտություն կա կազմակերպել՝

1. երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներով դպրոցում կազմակերպել հանդիպումներ երեխաների և նրանց ծնողների հետ
2. յուրաքանչյուր կիսամյակ կազմակերպել հանձնաժողովի նիստեր
3. թափառակաշրջիկությամբ, մուրացկանությամբ զբաղվող հակասոցիալական վարք դրսևորող երեխաների հայտնաբերման նպատակով ոստիկանության բաժնի հետ համատեղ կազմակերպել ստուգայցեր
4. մշակույթային և ուսուցողական միջոցառումների միջոցով նպաստել կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, մասնավորապես՝ սահմանափակ կարողություններ ունեցող, սոցիալապես անքապահով, առանց ծնողական խնամքի մնացած և հակասոցիալական վարք դրսևորող /իրավախախտում կատարած/ երեխաների աշխարահայցքի ձևավորմանը ու զարգացմանը, հայրենասիրական ու գեղագիտական դաստիարակությանը, ազգային արվեստին ու մշակույթային ժառանգության հաղորդակցմանը:

Հավելված
Կոտայքի մարզի Ջրառատ համայնքի
ղեկավարի 2020թ. փետրվարի 06-ի
թիվ 11

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

h/h	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքները	Կատարման ժամկետը	Պատասխանատու կատարողը
1	2	3	4	5
1.	Համագործակցություն Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության և մարզի այլ համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների հետ, մասնագիտական փորձի փոխանակում,	համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաձողովների հետ համագործության աստիճանի բարձրացում	Տարվա ընթացքում	ԽՀ հանձնաժողովի քարտուղար
3.	Ընտանիքի միջազգային օրվան նվիրված	Երեխաների և ընտանիքների հիմնախնդիրների քննարկում	մայիսի	ԽՀ հանձնաժողով
4.	2020թ. հունիսի 1-ին կազմակերպել մշակութային միջոցառում՝ նվիրված երեխաների պաշտպանության միջազգային օրվան	համայնքապետարանի բակում կազմակերպել միջոցառում համայնքի փոքրիկ բնակիչների համար	հունիսի 1	ԽՀ հանձնաժողովի քարտուղար
5.	Կատարել տնայցեր ըստ անհրաժեշտության	Հանձնաժողովի կողմից խնդիրների հայտնաբերում և լուծում	յուրաքանչյուր կիսամյակը մեկ	հանձնաժողովի անդամներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 12

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ԹԻՎ 20 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով՝ *որոշում եմ.*

1. Ջրառատ համայնքի ղեկավարի 2013թվականի օգոստոսի 23-ի « Ջրառատ համայնքի բնակչության տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 20 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա/ Որոշման բովանդակության 6-րդ կետի «...համայնքի ղեկավարի տեղակալ» բառերը փոխարինել «...համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ» բառերով:

բ/ Որոշմամբ հաստատված հավելված 1, հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20___ թ. _____ _____
գ.Ջրառատ